# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ ԳԱԲՐԻԵԼ ԳՅՈՉԱԼՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՎԵՐՋԻՆ ԴԱՍԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ շրջանավարտներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ դպրոցական Վերջին դասի կապակցությամբ:

Այսօր կրթօջախներում հնչող վերջին զանգը ավետում է ձեր մուտքը դեպի մեծ կյանք, դեպի ձեր երազանքները տանող լայնահուն ճանապարհ:

Ինչ ուղղությամբ էլ որ ընթանա ձեր ուղին, շատ կարևոր է, որ միշտ հիշեք, որ դուք հաղթանակած սերնդի ժառանգորդն եք: Դուք պարտավոր եք պահպանել, զարգացնել ու հարստացնել բոլոր այն ձեռքբերումները, որոնք ձեզ է փոխանցվել սերնդե-սերունդ:

Դպրոցն ավարտելը կարևոր սահմանագիծ է յուրաքանչյուր մարդու համար, որից հետո նա կանգնում է ավելի ինքնուրույն, ավելի վճռորոշ ու հասուն կյանքի շեմին:

Կյանք մտնելով իբրև առավել ազատ, անկաշկանդ մտածողությամբ անհատներ, դուք մեր նորօրյա պատմության հերոսական դրվագների ոգով կրթված ու դաստիարակված սերունդն եք, մեր պետության լիարժեք տերն ու արժանավոր զավակը:

Սիրելի՛ շրջանավարտներ, բարի երթ եմ մաղթում ձեզ, հաջողություննե՛ր ձեր բոլոր ձեռնարկումներին: